

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏԿԵՐՄԱՆ ՀՈՐՉԱՆՈՒՏՈՒՄ

Ա. Ա. ԱՎԱԳՑԱՆ

Շահան Շահնուրի քննադատական վերաբերմունքը հայ անցյալի ու ներկայի նկատմամբ, նրա խարազանիչ, մերկացնող, երբեմն էլ հակասական գնահատումները հայ քաղաքական գործիչների, ազգային առաջնորդների ու նաև մեր մտավորականության վերաբերյալ խիստ կարևոր են գրողի ստեղծած գրականությունը ճիշտ ընկալելու առումով: Նման դիրքորոշումը մեզանում, իհարկե, սկսվել էր Խորենացու «Ողբով» ու Փարպեցու «Թղթով», առաջացել Բաֆֆիով, Օշականով ու Օտյանով, ընթացք ստացել Տերյանի հողվածներում ու Չարենցի վերջին շրջանի մի շարք գործերում, նաև արձագանք էր գտնելու նոր ժամանակներում (Գ. Մահարի, Վ. Պետրոսյան, Ն. Աղայան...):

Հարցադրման հրատապությամբ, շոշափվող խնդիրների համակողմանիությամբ, խիստ բևեռացված գնահատումներով, Կոստան Ջարյանին զուգընթաց, թերևս Շ. Շահնուրն է, որ հասնում է չարենցյան ընդգրկումների մակարդակին և հենց այս պատճառով կարևոր է դառնում այն հարցի պատասխանը, թե ինչու այս վերաբերմունքը, ինչի հետևանք է նման մտայնությունը և այն ժխտողական հայեցակետը, որ նա դրսևորում է առհասարակ հայ հոգևոր ու նյութական բոլոր արժեքների նկատմամբ:

Շ. Շահնուրի առաջին իսկ գործը՝ «Նահանջը առանց երգի» վեպը, իր մեջ պարունակում է նման հարցերի որոշ պատասխաններ: Չխորանալով բուն մանրամասների մեջ՝ անդրադառնանք միայն վեպի բնաբաններից մեկին, որ քաղված է «Աստվածաշնչից»․ «Եւ ամենայն ժողովուրդքն, որ եկեալ էին եւ տեսանէին զտեսիլն զայն եւ զգործ, բախէին զկուրծս և դառնային»¹:

«Ձտեսիլն և զգործն» Շահնուրի համար առնվազն մի քանի իմաստներով է ներկայանում՝ հայկական ջարդերը, զաղթականության ողբալի կացությունը, ազգային նկարագրի ուժացումը և այդ ամենի նկատմամբ դրսևորված հայության ունայն ջանքերը:

Շահնուրը տեսնում էր, որ մանավանդ նոր սերունդն ավելի նվազ է հավատում հայի ազատությանը «և նվազ կատե թուրքը»․ «Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կը նահանջեն բարք, ըմբոնում, քարոյական, սեր, կը նահանջեն լեզուն, կը նահանջեն լեզուն, կը նահանջեն լեզուն»²:

Այս իրատեսությունը նրան մղում էր ելման դռների որոնման, ավելի ստույգ՝ մեղավորների որոնման: Եվ Շահնուրը գտնում է, թե ներքինիներ են եղել մեր բոլոր պապերը, մեր բոլոր բանաստեղծները՝ արցունք թափողներ, գրքերը՝ լոկ կաղապարներ, հայը առհասարակ տխեղծ ..., «... Արևելքի և Արևմուտքի մեջ... ավելորդ ոհմակ»:

Այս ամենի պատճառը Շահնուրը տեսնում է իր ուժի ու մտքի այն անգիտացման մեջ, որ ունեցել է և ունի մեր ազգը՝ «չկովեցանք, չխածիմք, չմաքառեցանք ... եղանք անմտորեն կրավորական, համակերպվող, աղերսարկու...»³:

¹ Շ. Շահնուր, Նահանջը առանց երգի, Բեյրութ, 1984, էջ 5:

² Նույն տեղում, էջ 123:

³ Նույն տեղում, էջ 121:

Ողջ հայությունը անգործունյա գտնվեց, և գրողը այդ խեղճությանն ու հավակնաբարձին դեմ է դնում կովոզ ու կորովի սերունդների կերպարը, ոգեկոչում նոր հայացքով նայել աշխարհին ու մեր նոր պատմությանը, «Կոիվը սուրբ բան է, - գրում է նա,- նրանից ազգ է դուրս գալիս՝ հաղթած կամ պարտված, բայց դուրս է գալիս»:

Շուրջ կես դար ապրելով օտարության մեջ՝ Շահնուրը՝ այդ անհայրենիք մենավորը, իրեն դուրս չի համարել հայության հետաքրքրություններից, դեռ ավելին, ամեն «ուրացումի պահ» նրան ավելի ու ավելի է մոտեցրել հայ իրակա-նությանը: «Հայաստան, Միություն, Անկախություն, Հայկական Գրականու-թյուն, անցյալ, ներկա, այս բոլորը զիս հալածեցին ու կը հալածեն ամեն օր ավելի հաճախադեպորեն», - գրել է նա իր լավագույն հոդվածներից մեկում: Գըտ-նել հայ կյանքի այս բարդ խնդիրների լուծումը, ամեն գնով գտնել զոնե «լուծու-մի մը հույսը», - հենց սա է Շահնուրի ողջ գրականության հիմնական միտումը:

Ազգին ապրեցնելու, նրա մեջ կայծ ներարկելու մտահոգությունը, հայ կյանքի անցյալն ու ներկան նորից ու նորից վերագնահատելու սևեռումը Շահ-նուրին հանգիստ չի տվել ինչպես իր վեպը գրելու ընթացքում, այնպես էլ նրա-նից հետո:

Կոստան Ջարյանը մի առիթով նկատել է, որ երկրորդական գրողները անընդհատ նոր թեմաներ են որոնում, այնինչ իսկական գրողը միշտ էլ մի թեմա-յի մեջ է խորանում: Կարելի է ասել, որ Շահան Շահնուր գրողի հիմնական թե-ման դարասկզբի հայության վարքագրությունն է: Շահնուրի երկու գործերը, ո-րոնց վրա ուզում ենք ուշադրություն հրավիրել, հենց «նույն» թեմայի անդրա-դարձներն են, սփյուռքի համար խիստ հրատապ կենսական կայուն դաշտի ստեղծման ճիգի նոր դրսևորում:

Ինչպես քսանական թվականներին, այնպես էլ 30-ականի սկզբներին սփյուռքահայ գրականությունը համատարած գրասիրական փորձերի, հուշա-գրությունների, եղեռնի ու ջարդերի հազարավոր պատկերների միջով հիմնակա-նում արտացոլում էր լավան ու անհեռանկար մի իրողություն և, դրանով իսկ, ժողովրդի ուսին դնում թույլի ու պարտվածի խարազանիչ լուծը: Վազգեն Շու-շանյանն ու Շահան Շահնուրն էին, որ եկան նոր հայացք ու ավյուն ներարկե-լու սփոփված գաղթահայությանը: Առաջինը նրանք էին, որ ազգի արժանա-պատվության գիտակցումը բերեցին, նախ՝ մասամբ ժխտելով այն թյուր տեսա-կետը, թե հայությունը դարասկզբին դրսևորել է միայն անձեռներեցություն ու անկարողություն, և ապա՝ հաստատելով, որ սփյուռքը ուժ է և կարողություն, այն նոր որակ է ազգի ճակատագրում և նոր հնարավորություններ:

Զննության առարկա «Ավագ Ռիբբաթ» (1930) և «Պոյնուզը»ները» (1932) գործերը արտահայտում են հայ իրականության և ազգային վարքագծի երկու հակոտնյա վիճակներ՝ մեկը խուլ անգործության ու սպառման, մյուսը՝ խղ-ընդվճման ու վրեժխնդրության:

Ի տարբերություն իր մի շարք նախորդների, Շահնուրը տխուր անցյալի ու ներկայի մեղավորների մեջ շեշտում էր ոչ միայն ազգի առաջնորդներին, այլև հենց բուն ժողովրդին: Ոչ հները և ոչ էլ 19-րդ դարի մեր գրողները (անգամ Չա-րեանը) ժողովրդի մեղքի բաժինը այդքան սրությամբ չէին շեշտում: Շահնուրը, կարելի է ասել, չի խնայում նաև նրան:

Ժամրային առումով դժվար է միանշանակ բնութագրել «Ավագ Ուրբաթ» գործը: Ոչ այն է՝ էսսե է, ոչ այն է՝ հրապարակախոսություն (թերևս այս երկու-սի համադրանքը): Մի գործ, որ թերևս նախադուր դարձավ գրողի ավելի լայն էսսեագրության («Թերթիս կիրակնօրյա թիվը» (1958), «Ձույզ մը կարմիր տետ-րակներ» (1967), «Ազատն Կոմիտաս» (1970), «Բաց տոմարը» (1971) և այլն): Խոսքի սրությամբ այն ավելի սերտ է կապված Շահնուրի գեղարվեստական հրապարակախոսության ծնունդ մեկ այլ գործի՝ «Վավերաթղթի» (1938) հետ:

Իր պատումը Շահնուրը սկսում է շատ հանդարտ, կարելի է ասել «անմեղ

մի անհոգութեամբ»։ Գրողի և ոչ մի գործ այսքան առօրեական չի սկսվում (հիշենք «Նահանջը»՝ «Հասունացած տղա մըն էր սակայն. ապացույց, որ չկրցավ բոզ ու Աստված բառերուն սահմանում մը տալ։ Աղջիկը գրկած էր հետևի կողմեն...» և այլն)։ Թվում է, թե այստեղ գրողը խոսում է անձնական ցավերի մասին, անգամ հիշատակում է իր կատվին ու ընդգծում թարմ ձուկ ուտելու իր ակնկալիքը, քանզի... հաջորդ օրը Ավագ Ուրբաթ էր։ Ուրեմն կարելի է և եկեղեցի այցելել։ Եվ հենց այդտեղ, «սևազգեստ խորանին» էլ նա տեսնում է պառավների այն բազմությունը («այս որքա՛ն պառավ, այս որքա՛ն տգեղություն»), որոնց աղոթքների մրմունջը ազոավների ձայնին է նմանվում՝ «... ընդա՛ա, ընդա՛ա»։ Հավաքվածների սևազգեստ այս կույտը, հենց այն անշնչելի մթնոլորտն է, որ «ճշմարիտ պատկերն է հայության», ուր չկա ոչ մի հույս, ոչ մի լույս, և վաղուց է, ինչ «ստվերը պատել է մեր գեղեցիկ եկեղեցին»։ Նույն ձևով մի Հրանտ, մի Սրբուհի, մի Տիրուհի անարդյունք աղոթում է մի ուրիշ եկեղեցու մեջ՝ Ադիս Աբեբայում, Սելանիկում, Գալաթիայում, Մարսելում կամ Բոստոնում՝ սին ու ունայն մի զբաղում, որ անապատի է վերածում շուրջբոլորը։

Հայ սերունդների երթը մի՞թե այսպես չի եղել դարերի մեջ՝ միշտ աղոթք ու հնազանդություն, միշտ ներում ու հայցում։ Եվ պայթում են շահնուրյան նզովքի խոսքերը. «Ով Դո՛ւք, տաղտկալի լինելու չափ անվերջանալի սերունդները Հայոց, ո՞ր է ձեր միտքը, ո՞ր է ձեր սիրտը... Դո՛ւրս, դո՛ւրս պարտվածները, դո՛ւրս անկարները։ Եվ դուն, երեկի սերունդ, ջարդված սերունդ, կուրանամ քեզ ալ... դուք չէիք կրնար ջարդվիլ ով ապրիլ 11եաններ։ Դուք պետք է որ ջարդվեիք, քանի որ ամեն բան ըրիք ատոր համար»⁴։ Գրողի խոսքի խարազանը խիստ գիտակցված է ու նպատակադիր։ Այն ատելության հետևանք չէ և ոչ էլ դաժանության։ Նա շատ լավ էր հասկանում, որ նահատակներին պետք է հարգել ու գթալ, բայց նրանց սիրել ինքը չէր կարող։ Եվ այն խոռովքը, որ կա նրա խոսքում «առ մերինները», տառապալո սրտի խորքերից է գալիս, արյան կանչից և ամեն բանից վեր շատ լավ է բնութագրում գրողի հայրենասեր հոգին ու հայ պատմության նրա նվիրումները։

«Գիտեմ,- գրում է Շահնուրը,- թե ձենն շատեր և շատեր (գրեթե բոլորը) բարի նպատակներով տոգորված էիք, բարի կամեցողություն ունեիք երբեմն և կը սիրեիք Հայր։ Բայց...»⁵։ Բանը հենց այդ «բայցի» մեջ է, քանի որ «... առիկա բան մը շարքաբացներ» (ընդգծումը - Ա. Ա.)։ Ասել է՝ երբ տանուլ ես տվել, ոչ մի արդարացում չի կարող լինել։ Ազգի ճակատագրի հետ առնչվողը, ժողովրդի բախտի պատասխանատվությունը իր վրա ստանձնողը թերևս կարող է ինքը անբարոյական լինել, բայց «պարտավոր է հաջողել», մանավանդ թույլ չտալ, որ յուրայիններին կոտորեն։ Անպատասխանատվությունը, «կրքի ու բարկության» պակասը հանգեցրել են ոչ միայն «երեկի» կորստյան, այլև «այսօրը» պահանջելու իրավունքի բացակայության։ Արդյունքում հայության մեջ մնացել է մի զգացում, որ բնութագրվում է ամենից տխուր, ամենից ցավալից մի բառով՝ կարտ։ Շահնուրը գտնում էր, որ հին ու նոր անգործության հետևանքներից մեկն էլ այն է, որ հայությունը դարձել է փերեզակ, անբուժելի կարճամիտ ու պառաված։ Ջառանաձների, գաղթականների, տարագրյալների, նպաստընկալների այս զանգվածը գնալով մանրանում է հոգով և թուլանում ֆիզիկապես։ «Ավի՛շ, ավի՛շ պետք էր մեզի, մեզի պետք էր վառող երակներու մեջ ...»։ Իր պոռթկում դատողությունների մեջ գրողը հասնում է նաև ծայրահեղությունների, գտնելով, որ հայությունը ոչ միայն չի մարսել («կոկորդինիս է մնացել») մարդկային քաղաքակրթությունների արարումները, այլև ի վիճակի չի եղել «ուրիշին ստեղծածը գնահատել, հասկանալ և յուրացնել»։ Այս առումով Շահնուրը Նարեկացուն անվանում է «գիջացած մտքի» մարմնավորում, որը չի կարողացել թափանցել «Մուրք Գրքի» հիմնական իմաստի մեջ. «Մարդկայինը չկա իր գործին մեջ, այլ

⁴ Ը. Շահնուր, Ավագ Ուրբաթ, «Չվարթոց», Փարիզ, 1938, N 8, էջ 339:

⁵ Նույն տեղում:

կան անթիվ չնշագարդեր..., Նարեկացին չէ հասկցած, որ մահացու մեղք է, հակաքրիստոնյա ընթրնում է միսը ուրանալը»: Շահնուրն այն համոզումն է հայտնում, որ Քրիստոսը մարմինը նվիրական էր համարում, մարմինը, որ գործունեության միակ միջոցն է՝ սիրո թագավորության ներքո, ուր ծնվում են գեղեցիկ մտածումները, անճնագոհություն պահանջող գաղափարները:

Այս գործում Շահնուրն ազգային թերությունների թվում նշում է նաև երևակայության պակասը, վերացականի հանդեպ ցուցաբերված անտարբերությունը՝ չունենք մեր «Հազար ու մեկ գիշերները», դիցաբանության մեր նվիրումները: Ուշագրավն այն է, որ «Վավերաթղթում» գրողը ճիշտ հակառակն էր պնդելու՝ գտնելով, որ ռոմանտիզմը մեր կորուստների պատճառներից մեկն էր, անիրագործելի գաղափարների մի ողջ շարան, որոնցից և ոչ մեկը ի վիճակի չէր պահպանելու սպանդին ու նախճիրին: Շահնուրն իր առաջին տեսակետի հակման մեջ ճիշտ էր այն առումով, որ մինչև լույսին չնայես, ոչ մի լույս գոյություն չի ունենալու քեզ համար, և պետք է գտնվել «այն պատուհանի առջև, որը երկինք է նայում, լինել այն ճամփի վրա, «որ թև միշտ չէ, որ տեղ է հասցնում, սակայն որը բարձրանում է»:

Սա, իհարկե, մի կողմից: Կա հարցի նաև մյուս երեսը: Շահնուրը շատ որոշակի տարբերակում է ժողովրդական առողջ ռոմանտիզմը հեղափոխական ռոմանտիզմից՝ մերժելով վերջինիս դրսևորման արկածայնությունը: Լոկ ոգևորությամբ հեղափոխություն չի արվում: Ինքնագոհության պատրաստակամությունն էլ քիչ է արդյունքի հասնելու համար:

Կրակ ու կայծ է պետք, որ «ազգը պռոսա», պղպեղ է պետք, որ վերքը մքմա: Անգամ հայ կինը գիտակցումը չունի իր կնոջական մարմնի հրաշալիքին. «ըսել է այդ կինը չէր ուզեր գրգռել այրը, ըսել է այրը չէր պահանջեր գրգռվել»⁶: Մի խոսքով՝ համատարած է անգործությունը:

Տանուլ ենք տվել նաև արվեստի մեջ: Այնինչ գեղեցիկի պաշտամունքը ծնունդով է հղի: Մենք չենք ունեցել և չենք արժևորել գեղեցիկը, ուրեմն և չենք ստեղծագործել: Հայը ոչ մտքով և ոչ էլ սրտով ընդառաջ չի գնացել բարձր իդեալներին, այն իդեալներին, որոնք արդյունքով են հղի:

Որպես ստեղծագործական խթանիչ ու մանավանդ ապրելու հեճարան՝ Շահնուրը հայության համար մատնանշում է նաև մարդկային և ազգային տառապանքն ու վիշտը, որոնք հաճախ մղում են գործունեության, ուրեմն՝ Աստծո որոնման, ասել է թե՛ փրկության որոնման: Եվ հնչում է գրողի հարցում-եզրահանգումը՝ մի՞թե ավելի լավ չէ, որ հայությունը բարձրալիմ «երթա», քան իր «administration»-ին: Նա իրավացիորեն գտնում է, որ եղեռնից էլ անգամ կարելի է օգուտ քաղել՝ «դասեր առնել»:

Շահնուրի այս մտահոգությունների արձագանքը կա՞ր արդյոք իր սերնդակիցների մեջ: Արդյո՞ք հող կար նրա ոտքերի տակ, և, ինչպես ինքն է ասում, «կա՞ իր շուրջը ամբոխ», և արդյո՞ք այդ զանգվածը պատրաստ է ճանապարհի հայտնաբերելու՝ փոխվելու, հուսալու ու հավատալու, ասել է թե՛ գոյակոմվելու: Չէ՞ որ միայն այդպես կայմերի վրա կարող են դրոշներ պարզվել, միայն այդպես կարող են ծաղկել նշենիները: Այլապես ազգը կանհետանա, քանի որ «ծուլ էր ան», քանի որ նստեց մեծ ճանապարհի եզրին ու «համրիչ քաշեց», թողեց, որ ժամանակը անցնի՝ «Աստված իմ, ի՛նչ անխնա վատնում»: Այլապես կմնանք խավարի մեջ, Ավագ Ուրբաթի մեջ՝ միայնակ, փակ դռների հետևում, մի «քիթփիռ» աստծո հույսին, որը բոլոր աստվածներից ամենամակարն է և մեզ է տվել միայն իր մահվան օրը՝ Ավագ Ուրբաթը:

Ուրեմն բավ է, որքան աղոթեցինք ու սևեր հագանք, պետք է բարկությամբ ու ատելությամբ լցվել: Շահնուրը գտնում է, որ նոր ժամանակներում ապրելու համար «կիրք, ատելություն, բայց մանավանդ, «հուսահատություն» է անհրաժեշտ հայությանը:

⁶ Նույն տեղում, էջ 340:

«Եթե չունիս, ես քեզի կու տամ, բաց ձեռքերդ, ես ունիմ պետք եղածն ավելի... տես կը ճգնվիմ անոնց բեռանը տակ. ես այնքան ունիմ ատելություն, ես այնքան, այնքան ունիմ հուսահատություն»:

Ո՞րն է հայության գլխին կախված խնդիրների լուծումը, ազգային հարատևության ի՞նչ ճանապարհ կարելի է գտնել: Այս բարդ հարցադրումներին գրողը պատասխանում է յուրովի:

Արդեն «Նահանջում» Շահնուրն ազգային փրկության ճանապարհներից մեկը տեսնում էր հայրենադարձության մեջ, մյուսը՝ ազգային բարքերի ու հայ ընտանիքի պահպանման մեջ: «Հարալեզներուն դավաճանությունում» նա կոչելու էր ավելի մեծ սիրո և ավելի մեծ հավատի: «Ավագ Ուրբաթում» գրողը այդ ուղին տեսնում է կյանքը ուժով ու կրքով ապրելու մեջ, «ինքզինքը փոխվելու» մեջ: Համանման եզրահանգումների ավելի թանձրացված գեղարվեստական մարմնավորումը եղավ Փարիզի «Մենք» հանդեսում տպագրված Շ. Շահնուրի «Պոյնուզը»-ները՝ Թեև ինքը՝ հեղինակը, այն անվանում է գրություն, իրականում այն ունի պատմվածքի բոլոր հատկանիշները, ինքնուրույն մի գեղարվեստական միավոր, որ նախաբանը պիտի լիներ գրվելիք «Որդիք ուրոտման» մեծածավալ վեպի: Պատմվածքը վեճերի տեղիք տվեց հենց սկզբից (ընդհուպ մինչև Շահնուրի հեռանալը «Մենք»-ի խմբագրական կազմից ու գրական շրջանակից), և այդ ոչ միայն գաղափարական ու պատկերային կառուցվածքի, այլև լեզվաոճական դրսևորումների պատճառով՝ «չոելու գնաց», տղամարդու «պանը» և այլն: Նման արտահայտությունները թեև դրսևորում էին գործող անձերի բնորոշ ստաժողությունն ու այն բնական մթնոլորտը, որի մեջ ծավալվում են գործողությունները, սակայն անհարիր էին դասական գրականության ավանդներով կրթված ընթերցողին: Այդ կաղապարներից դուրս էր մանավանդ պատմվածքի սյուժետային գիծը, որը համառոտ հանգում է հետևյալին (պատմվածքը մեզանում չի տպագրվել): Հայ լեզեռնականները ձորակի մեջ տեսնում են մի թուրք կնոջ ու տղամարդու և նրանց մեղադրում «պղտիկ թալաթ»-ության մեջ, որ հայեր են ջարդել: Հանուն հայ մահատակների՝ իրենք էլ չպիտի մերեն և պիտի ջարդեն, ինչպես թուրքերն են վարվել հայերի հետ: Կինն ու տղամարդը երզվում են, որ հայ չեն սպանել, ընդհակառակը՝ օգնել են. «Եթե յանցավոր ենք, Աստված պէլանիս (հավատքներիս-Ա. Ա.) տայ»⁷:

Պարզվում է, որ երկու թուրքերը ոչ թե ամուսիններ են, այլ քույր ու եղբայր: Հայ զինվորները սկզբում որոշում են նրանց ականջները կտրել մախոդ օրվա օրինակով, լեզեռնականներից մեկը առաջարկում է տղամարդու «պանը» կտրել և բերանը դնել, իսկ «կնոջ վրայ ընելիքը» հարկավ հեշտ կգտնվի:

Բայց հայերից մեկը առաջարկում է իրենց աչքի առջև կենակցել տալ քրոջն ու եղբորը՝ այսպիսով նրանց կոտորվա՞ն, այսինքն՝ եղջյուրակիր դարձնել՝ վրեժ լուծելով ոչ միայն առհասարակ թուրքական դաժանությունների համար, այլև Կիլիկիայի թուրքերից, որոնք «պոյնուզը» (կոտորակիր) էին անվանում հայ լեզեռնականներին՝ նրանց զինվորական գլխարկների երկու ծայրերի ցցվածքների պատճառով:

Մահվան սարսափի տակ գյուղացի կինն ու տղամարդը կատարում են լեզեռնականների պահանջը՝ կենակցում են միմյանց հետ: Բավարարվելով խենչական տեսարանով, համձնարարելով ծնվելիք երեխայի անունը «Վրեժ» դնել, հայ զինվորները հեռանում են՝ հեշեցնելով իրենց խրոխտ երգը.

*Վրեժի սև արյուն մեր հող ռոռգե,
Տարագիր Հայն իր կյանքն նորոգե,*

.....
Կամավոր բանակ, հառաջ...⁸

⁷ Շ. Շահնուր, «Պոյնուզը»-ները, «Մենք» հանդես, հ. Գ., Փարիզ, 1932, էջ 149:

⁸ Նույն տեղում:

Որոշ ժամանակ հետո, գորավոր թուրքական քանակի շրջապատումից դուրս պրծնելով, հայ լեզոնականների փոքրիկ խումբը հեռվում լույս է նկատում: Երբ մոտենում են, տան պատուհանից տեսնում և ճանաչում են ծանոթ թուրքին ու նրա քրոջը... որոնք այդ պահին կամավոր կենակցում էին միմյանց հետ:

«Կը հիշե՞ս,- ասում է պատմվածքի հերոսներից մեկը,- այն օրը կրսեին անդադար - «Եթե հանցավոր ենք, Աստված պելանիս տա», կը նշանակե, որ հանցավոր էին, քանի որ երկու ամիսե ի վեր Աստված տվել է իրենց պատիժը»⁹:

Պատկերելով այդ պահը՝ Շահնուրը նկատել է տալիս, որ այդ օրը հինգ-շաբթի էր, այսինքն՝ մուսուլմանների սուրբ օրը, աղոթքի օրը, այնինչ նրանք պղծված են այն աստիճան, որ անգամ իրենց հավատքի օրը չեն հարգում:

Գրողի մեկնակետը շատ որոշ է, բավ է որքան բարոյական հաղթանակներով սնվեցինք: Նախորդ սերունդների մարդասիրական ու հաշտվողական վարքագիծը իր բացասական կնիքն է դրել ապրողների գործելակերպի վրա: Դրանցից պետք է ձերբազատվել օր առաջ: Պարտությունները կհաջորդեն իրար, քանի դեռ «մերիները Լոզանը կսպասեն»: Շահնուրը այս պատմվածքով մեկ անգամ ևս հաստատում է, որ հայությունը պարտավոր է լիարժեք կերպով արձագանքել իր վշտին, ուրեմն և գիտակցել իր ուժը, այնինչ մեզանում եղած ընթուստացումները համարժեք չեն եղել փրկության ելքերին, «...մենք օր մը օրաց մեկուն չհաղթեցինք, որպեսզի մեզ հարգեն ծածկված սարսափով»¹⁰:

Եվ իսկապես, մեր ողջ պատմության ընթացքում մենք չենք վարվել մեր քշնամիների հետ այնպես, ինչպես նրանք են մեզ հետ վարվել, ու հայությունը վեր է ածվել մասերի, Շահնուրի բնութագրմամբ՝ «փոշիի»: Գրողը հավատացած էր, որ դեռ կարելի է այդ փոշին ձուլել, ու չպետք է սպասել, որ քամին այն վերջնականապես տարտղին: Նոր ավիշի համար հարկավոր է սեփական ուժի գիտակցում ու այդ ուժի կիրառում: Հակառակորդը հենց այդպես վարվեց և հաղթեց: Մենք պարտվածներ ենք, քանի դեռ գայլային այս աշխարհում կքայլենք, Շահնուրի խոսքերով ասած, «Նազովեցիին հանձնարարյալ «թուղթ»-ով դրկված քրիստոնեական հնազանդութամբ», քանի դեռ կունենանք մեր այն աստվածը, որ «քրիստոնյա աստվածներուն... ամենեն անարյունը, ամենեն վատուժը» կլինի՝ ճիշտ և ճիշտ «անվրեժխնդիր մեր ժողովրդի նկարագիրը»: Հասկանալի է, որ քրիստոնեությունը չէ, որ Շահնուրին մտահոգում էր, այլ այն ճամփան, որ «երեք անգամ կցածրանա» և «ոչ մի տեղ չի տաներ», ասել է՝ այն կորուսյալ ազգային վարքագիծը, որ դարեր շարունակ որդեգրել է ազգը:

Երկար, շատ երկար ժամանակ հայությանը խաբել են ու շահարկել: Մոռացվել են բոլոր դաշնագրերը: Իրական են մնացել միայն հայոց աճյունները: Սեփական ուժի գիտակցումը, նրա ամենօրյա գործադրումը պետք է դառնա ազգային կենսածև (հիշենք Ռ. Սևակի տողը՝ «Ձի թուրն ավելի արդար է Խաչեն»): Ուրեմն «հայ մեռելների հոգուն համար... պետք չէ ներենք» հանձնարարականը, որ հնչում է պատմվածքում, յուրովի մի նախազգուշացում է մնում գալիք ժամանակների համար և ընդգծում վրեժխնդիր ուժի հարկը՝ որպես հակակշիռ վերամբարձ հայրենասիրության, ի հաստատումն այն ճշմարտության, որ քանի դեռ արդարության «Աստված է մեռեր» շատ երկար են լոնլու համամարդկային եղբայրության զանգակները:

Արդյո՞ք իր գրություններում Շահնուրը չափից ավելի է ողբում իր հոգու ցավն ու չափից ավելի սրում ազգային վիշտը: Կարծում ենք, որ ոչ: Ցավոք, մեր կյանքի հետագա իրողությունները միայն հաստատեցին գրողի եզրահան-

⁹ Նույն տեղում, էջ 158:

¹⁰ Շ. Շահնուր, «Ավագ Ուրբաթ», էջ 339:

գումները, նաև նրա մտավախությունները: Այսուհանդերձ, պետք է որոշ վերապահումով մոտենալ Շահնուրի գնահատումներին, քանի որ անդին կային մտքի ու գործի նաև բազում նվիրագործումներ, որոնք ապրեցրել ու ապրեցնում են մեր ժողովրդին ազգային գոյամարտի բարդ հորձանուտներում:

Ա. Ա. Առաքել - В стихии изображения национального поведения. - В статье рассматриваются некоторые особенности армянского национального поведения, отраженные в двух произведениях талантливого зарубежного армянского писателя Шагана Шагнур. Согласно выраженной писателем точке зрения, наш народ не отозвался должным образом на страдания, выпавшие на его долю, занял пассивную позицию, в результате чего и оказался в более трагическом положении. И пока армянский народ не выйдет из своего инертного состояния, не освободится от вековых умонастроений "христианской покорности", не заговорит со своими врагами с той же позиции силы, поражения будут следовать одно за другим.

Частично защищая эту точку зрения писателя, автор статьи в то же время полагает, что Шагнур не всегда справедлив в своих оценках, поскольку история знает множество примеров подвижничества, позволившего нашему народу выжить на сложных перекрестках веков.